«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

Լից. ՔՊԼ N- 001379-06

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Բյուրեղավան համանյքի Կոտայք փողոց 28/89
հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան
գազաֆիկացման նախագծանախահաշվային
փաստաթղթերի կազմման ծառայություն

Պատվիրատու՝ Բյուրեղավանի համայնքապետարան

Պայմանագիր՝ N ԿՄԲՀ-ՄԱԾՁԲ -25/38

«Խոյանք» ՍՊԸ

Տնօրեն՝ Է. Հովսեփյան

ՆԳԻ՝ Վ. Հովսեփյան

նախագծեց Պ. Հովսեփյան

Գիրք - 1 Նախագիծ

ք. Հրազդան 2025թ.

Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Абовянский Ф Г Г

ул. Севана 16, г. Абовян, Котайкская область,
Республика Армения, 2204
тел.: (374 10) 29-41-55, факс: (374 222) 2-22-32
e-mail: abovyan@gazpromarmenia.am, gazpromarmenia.am.

ГАЗПРОМ АРМЕНИЯ

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

Աբովյանի ԳԳՄ

2204, ՀՀ, Կոտայքի մարզ,
ք.Աբովյան, Սևանի 16,
հեռ.՝ (374 10) 29-41-55, ֆաքս՝ (374 222) 2-22-32
էլ.փոստ՝ abovyan@gazpromarmenia.am, gazpromarmenia.am.

« 02 » 05 2025 г.

№ 01-10/907

*Բյուրեղավան համայնքի ղեկավար*
*պարոն՝ Հ. Բալասյանին*

Աբովյանի ԳԳՄ – ն թույլատրում է Ձեր միջոցներով, պայմանագրային կարգով՝ մեր առաջադրած տեխնիկական պայմաններին համապատասխան, արտոնագիր ունեցող կազմակերպությունների միջոցով, կազմել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ք. Բյուրեղավան Կոտայքի փողոց 28/89 հասցեում գտնվող ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականությունը հանդիսացող մարզադպրոցի կաթսայատան գազիֆիկացման նախագծային նախահաշվային փաստաթղթերը և իրականացնել շինարարական հավաքակցման աշխատանքները Ձեր կողմից համաձայնեցված և վերահսկողություն իրականացնող իրավասու մարմիններում գրանցված նախագծով:

***Առդիր՝ տեխնիկական պայմանները չորս թերթից:***

Տնօրեն [signature] *Դ. Ղազախեցյան*

*Կատարող՝ Խ. Գևորգյան*
(0222)20272(21)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 01-1088/25
« 02 » 05 2025 թ.

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Աբովյանի ԳԳՄ
*(ք.Աբովյան, Սևանի փող. 16 (0222)2-30-73)*

# ԳԱԶԻՖԻԿԱՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

*ՀՀ Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, ք.Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 28/89 հասցեում գտնվող ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ-ի սեփականությունը հանդիսացող ( 07-003-0025-0123 ) մարզադպրոցի կաթսայատան*

2025 թ.

Հաստատում եմ
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Աբովյանի ԳԳՄ
(անվանումը)
Տնօրենի տեղակալ- Գլխավոր ճարտարագետ

Ա.Եփրեմյան
(ստորագրությունը)
«02» 05 2025թ.

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՀՀ Կոտայքի մարզ, Բյուրեղավան համայնք, ք.Բյուրեղավան, Կոտայքի փողոց, 28/89 հասցեում գտնվող ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ պատկանող մարզադպրոցի կաթսայատան գազիֆիկացման

| Գործող գազատար | Ելակետային տվյալներ |
|---|---|
| • անվանումը | ք.Բյուրեղավան, Կոտայքի փողոց ներքին ցանց մ/ճ ս/գ գազատար |
| • միացման կետը (կետերը) | ըստ գծապատկերի |
| • նվազագույն և առավելագույն ճնշումները միացման կետում (կետերում) (Pmin - Pmax) (կգ/սմ²) | 1.2-1.5 |
| • գազատարի տրամագիծը (մմ) | 63 |
| • խողովակի նյութը | պոլիէթիլեն |
| • գործող գազատարի փոփոխության (վերակառուցման, վերատեղադրման, տեղափոխման) անհրաժեշտություն | - |
| **Գազիֆիկացվող Օբյեկտ** | - |
| • օգտագործման նպատակը | ջեռուցում |
| • առավելագույն հզորությունը (գազի առավելագույն ժամային ծախսը) միացման կետում (կետերում) (մ³/ժամ) | 50 |
| • հեռավորությունը միացման կետից (մ) | 60 |
| • գազի հաշվառման սարք (համապատասխան էլեկտրոնային ճշտիչով) | Գազի հաշվառման սարք ըստ գազասպառման ծախսերի բարձր ճշտության դասի կահավորված էլ. ճշտիչով |
| **Լրացուցիչ պայմաններ** | - |
| • այլընտրանքային վառելիքի պաշարի նախատեսում | Նախատեսել այլընտրանքային վառելիքի մեկամյա պաշար և օգտագործման հնարավորություն |
| • գործողության ժամկետը | 1 տարի |
| • Օբյեկտի առանձնահատկությամբ պայմանավորված այլ պայմաններ | Գազի ճնշման կարգավորիչի տեղադրում |

Օբյեկտի գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման սխեմա




Ծանոթություն

1. Անհատույց օգտագործման պայմանագրերով շահագործվող գազատարներին գազասպառողների (Օբյեկտների) միացման իրավունքը պատկանում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:
2. Էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և սպառողների միջին ու բարձր ճնշման գազի համակարգերի՝ նոր կառուցվող և վերակառուցվող էներգատեղակայանքների գործարկումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից տրված գործարկման եզրակացության՝ գործարկման թույլտվության առկայության դեպքում:
3. Օբյեկտի գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցերին իրականացվում է նախագծանախահաշվային փաստաթղթերին շինհավաքակցման աշխատանքների ամբողջությամբ համապատասխանության դեպքում:
4. ____________________________________________________________

ՇՏ բաժնի պետ՝ ____________________ Խ.Գևորգյան
(ստորագրությունը)

Կազմեց՝ ____________________ Ռ.Սարգսյան
(ստորագրությունը)

## Ջերմատեխնիկական ցուցանիշներ
### գազիֆիկացվող օբյեկտում գազասպառող սարքավորումների

| NN | Սարքավորումների | | Այրիչի | | | | Գազասպառման օրեկան ծախսը (ժամ) | Գազի ծախսը (մ³) | | | | | | Անհրաժեշտ ճնշումը (կգ/սմ²) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը | Քանակը (հատ) | Տիպը | Քանակը (հատ) | Ժամային ծախսը (մ3) | | | Ժամային | | Օրեկան | | Ամսեկան | | |
| | | | | | $Q_{max}$ | $Q_{min}$ | | $Q_{max}$ | $Q_{min}$ | $Q_{max}$ | $Q_{min}$ | $Q_{max}$ | $Q_{min}$ | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* | *11* | *12* | *13* | *14* | *15* |
| 1 | Ջեռուցման կաթսա | 2 | ծխատարով | 1 | 25 | 4 | 16 | 50 | 8 | 800 | 128 | 24000 | 3840 | 0.05 |
| 2 | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | | | | | |

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ** ԳԳՄ
(անվանումը)

Տնօրենի տեղակալ – Գլխավոր ճարտարագետ

(ստորագրությունը) Ա.Եփրեմյան

Կ.Տ.

ՇՏ բաժնի պետ

(ստորագրությունը) Խ.Գևորգյան

«02» 05 2025թ.

**Դիմող անձ**

(կազմակերպության անվանումը) (պաշտոնը)

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ Տ

<……> ………………..2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-001379, 1-ին դաս

*(սերիան, համարը, դասը)*

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ՝ ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)*

ՏՐՎԱԾ Է

2024-10-10, «ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,*

ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ՀՐԱԶԴԱՆ, ՀՐԱԶԴԱՆ, ՄԱՔՐԱՎԱՆ ԹԱՂ. Ն.ՇՆՈՐՀԱԼՈՒ Փ., 19

*գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UG94-3416-D2A4-F6A6**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊՆ-001379-06

*(ներդիրի սերիան, համարը)*

«ԽՈՅԱՆՔ» ՍՊԸ

*(լիցենզավորված քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը)*

ՋԵՐՄԱԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՋԵՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ)

*(քաղաքաշինության բնագավառում գործունեության ենթատեսակը)*

11.10.2024թ.

*(ներդիրը տալու օրը, ամիսը, տարեթիվը)*

Գործողության ժամկետը՝ 10.10.2029թ.

*(օրը, ամիսը, տարեթիվը)*

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGF2-1BCA-1C3B-F5D4**

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

| Պատասխանատու մասնագետի/ների անձնագրային տվյալներ | հավաստագրի սերիա | հավաստագրի համար | ստանալու օր, ամիս, տարեթիվ |
| --- | --- | --- | --- |
| ՎԱՐԴԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ | Հ | 001969 | 2024-09-13 |

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ **UGF2-1BCA-1C3B-F5D4**
Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## Շինարարության կազմակերպում

### 1. Ընդհանուր տեղեկություններ

Շինարարության կազմակերպման սույն նախագիծը կազմված է համաձայն Պատվիրատու` Բյուրեղավանի համայնքապետարանի պատվերի, տեխնիկական առաջադրանքի, տեխնիկական պայմանի պահանջների և ՀՀ գործող շինարարական նորմերի և ստանդարտների համաձայն:

Շինարարության տևողությունը որոշված է գործող նորմատիվային փաստաթղթերով, բայց կարող է ճշտվել Պատվիրատուի հետ:

Կապալառուն պետք է օգտագործի շինարարության իրականացման ժամանակ այն նյութերը, որոնք նշված են նախագծում և տեղադրի այն սարքավորումները, որոնք տրված են նախագծով: Կապալառուն կարող է առաջարկել այլընտրանքային նյութեր պայմանով, որ այդ նյութերի որակը համապատասխանի (կամ լինի ավելի բարձր) նախագծով տրվածներին: Այդ նյութերի կիրառումը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի և նախագծի գլխավոր ճարտարագետի հետ: Սարքավորումները ձեռք բերելուց առաջ, Կապալառուն դրանց ցանկը պետք է համաձայնեցնի Պատվիրատուի հետ և ներկայացնի համապատասխան սերտիֆիկատները:

Կապալառուն պարտավոր է օբյեկտը շահագործման հանձնելուց առաջ անցկացնել համապատասխան մոնիթորինգ և ստուգում` Պատվիրատուի և նախագծի գլխավոր ճարտարագետի հետ համատեղ` համոզվելու համար կատարված աշխատանքների համապատասխանությանը նախագծային չափանիշների հետ:

### 2. Հիմնական աշխատանքների իրականացում

Շինարարական աշխատանքները իրականացնելիս անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ դրույթներով (բայց չսահմանափակվել այդքանով).

Նախապատրաստական շրջանում`

- կատարել բոլոր այն աշխատանքները, որոնք կապված են շինարարությանը խանգարող առկա ինժեներական կոմունիկացիաների ժամանակավորապես կամ մշտական տեղափոխման հետ,

- համաձայնեցնել շինհրապարակի շուրջ գտնվող հիմնարկությունների ղեկավարների և բնակելի տների բնակիչների հետ ինժեներական կոմունիկացիաների անջատման ժամանակը և աշխատանքի կատարման եղանակները, որպեսզի քաղաքացիներին հասցրած անհարմարությունները լինեն փոքրագույն:

- շինարարական աղբի հեռացումը կատարել արկղանման բաքերով, փոշին քչացնելու նպատակով` շուրջը ջրելով,





- շինարարական աղբը տեղափոխել տեղական իշխանությունների հետ համաձայնեցված տեղամաս,

Մասնավորապես Կապալառուն պարտավոր է.

- շինհրապարակի, շինարարական տեղամասերի, բանվորական տեղերի, տրանսպորտային միջոցների ու շինարարական մեքենաների երթևեկությունը, մարդկանց անցատեղը կազմակերպելիս, ճշտել մարդկանց համար վտանգավոր գոտիները, որտեղ մշտապես առկա են կամ կարող են լինել վտանգավոր արտադրական գործոններ:

- մշտապես առկա վտանգավոր արտադրական գործոնների գոտիներում կողմնակի մարդկանց մուտքը կանխելու նպատակով պետք է տեղադրվի շրջափակիչներ (վտանգազերծող):

Բանվորական այն տեղամասերը, որտեղ կիրառվում է կամ պատրաստվում է սոսինձ, մածիկ, ներկեր և այլ նյութեր, որոնք անջատում են պայթունավտանգ կամ թունավոր նյութեր, չի թույլատրվում իրականացնել կրկնակի կիրառմամբ աշխատանքներ կամ կայծ առաջացնող գործողություններ:

Այդպիսի գոտիներում էլեկտրասարքավորումները պետք է կատարված լինեն պայթունաանվտանգ եղանակով: Բացի այդ, պետք է ձեռնարկվի միջոցառումներ, որոնք կկանխեն ստատիկ էլեկտրական լիցքերի առաջացումը և կուտակումը:

### 3. Շինարարության տևողությունը

Շինարարական աշխատանքների ընդհանուր նորմատիվային տևողությունը որոշվում է հաշվարկով և կազմում է 1 ամիս:

Այն կարող է ճշտվել Պատվիրատուի կողմից` Կապալառուի հետ պայմանագիր կնքելիս, հիմք ընդունելով Հայաստանի շուկայում ձևավորված նման ծրագրի իրականացման իրատեսական ժամկետները:

Շինարարության նախապատրաստական ժամկետը նախատեսված է մեկ շաբաթ:

Շինարարության ժամանակացույցը տրված է ներքևի աղյուսակով:

### 4. Շրջակա միջավայրի պահպանություն

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանը որոշելու և մեղմացնող միջոցառումներ կիրառելու նպատակով իրականացվել է ուղղակի պարզ հետազոտություն: Շրջակա միջավայրի ազդեցության հիմնական ռիսկերը հետևյալն են.

Շինարարության և վերակառուցման ժամանակ

- ճանապարհից, շին հրապարակից և բեռնատար ավտոմեքենաներից բարձրացող փոշի,

- շին. հրապարակում օգտագործված ջուր,

- թափոնների վերացում,

- նյութերի օգտագործում և տեղափոխում, որոնք վնաս են առողջությանը (կապար պարունակող ներկեր, ասբեստ պարունակող նյութեր և այլն),

- շին աղբի տեղափոխում,

- քարային աշխատանքներ,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացումը և մոնիտորինգի պարտականությունները տվյալ շին հրապարակում դրվում է տեխնիկական հսկիչի վրա:

Իրականացվող շինարարական աշխատանքները պետք է համապատասխանեն Հայաստանում գործող շրջակա միջավայրի մասին կանոններին:

## 5. Կապալառուի առաջնահերթ խնդիրները

1. Մանրակրկիտ ձևով ծանոթանալ նախագծային փաստաթղթերին, նրանցով նախատեսվող աշխատանքների ցանկին և ծավալներին, տեխնիկական մասնագրերին, մրցութային փաթեթի ողջ բովանդակությանը:

2. Ճշտել կառույցի գտնվելու վայրը և տեղում խորապես ուսումնասիրել պահանջվող աշխատանքների ծավալները, նրանց կատարման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ռեալ հնարավորությունները սեփական կամ ներգրավվելիք ուժերով, ելնելով արտադրական հզորություններից և առաջադրանքի կատարման ժամկետից:

3. Պարզել, աշխատանքները կատարելու տեսակետից, տեղի առանձնահատկությունները, հնարավոր դժվարությունները, որոնց առկայությունը կարող է անդրադառնալ աշխատանքների կատարման ժամկետների և գնի վրա:

4. Պարզել շինարարական օբյեկտներին մոտենալու, շինհրապարակի կազմակերպելու հնարավորությունները, պահեստային տնտեսության և այլ անհրաժեշտությունների համար գոյություն ունեցող շինությունների օգտագործման հնարավորությունները, ջրամատակարարման և էլեկտրամատակարարման աղբյուրները:

5. Պարզել ժամանակավոր կառույցների անհրաժեշտության ցանկը, այդ թվում ճանապարհներ, էլեկտրահաղորդագծեր, ջրագծեր, կենցաղային պայմանների համար շինություններ և այլն:

6. Հաշվի առնել, որ աշխատանքների գնի մեջ մտնում է նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարումները, ինչպես նաև ապահովագրական վճարումները:

7. Վերը նշված ուսումնասիրությունների և նրանց վերլուծությունների արդյունքում առաջացած լրացուցիչ ծախսերը հաշվի առնել նախահաշվի միավոր գները և ընդհանուր արժեքը որոշելիս:

## 6. Շինհրապարակի նախապատրաստում

Կապալառուի պարտականությունների մեջ է մտնում, Պատվիրատուի կողմից համաձայնեցված սահմաններում, շինարարության համար հատկացված տարածքի մաքրումը արմատներից, կենցաղային աղբից և այլ նյութերից:

Պատվիրատուն իրավունք ունի անարգել մուտք գործել ցանկացած ժամանակավոր կառույց և անհրաժեշտության դեպքում կատարել ստուգումներ:

Ժամանակավոր կառույցների շահագործումից և շինարարության ավարտից հետո, Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին անհապաղորեն վերացնել ցանկացած





ժամանակավոր կառույց (կամ բոլոր ժամանակավոր կառույցները) Պատվիրատուի պահանջով:

## 7. Կլիմայական գործոնը

Իրականացվող շինարարական աշխատանքների վրա մթնոլորտային ազդեցությունները բացառելու նպատակով Կապալառուն պարտավոր է շինհրապարակում պատշաճ մակարդակով կազմակերպել մակերևութային ջրերի հեռացում:

Կապալառուն պետք է կազմակերպի աշխատանքները այնպիսի հերթականությամբ և ժամկետներում, որպեսզի հնարավոր չափով բացառվի մթնոլորտային տեղումների (կամ ջերմաստիճանի) հետևանքով կատարված աշխատանքներին հասցված վնասները:

Կլիմայական անբարենպաստ պայմանները հիմք չեն կարող հանդիսանալ աշխատանքների իրականացման համար նախատեսված տևողությունը և գինը վերանայելու:

Բացառիկ դեպքերում Պատվիրատուն իրավասու է սահմանված կարգով որոշում ընդունել աշխատանքների ժամանակավոր ընդհատման մասին, կապված աշխատանքների անհրաժեշտ որակի ապահովման անհնարինության հետ:

## 8. Անվտանգության պայմաններ

Կապալառուն պարտավոր է ապահովել շինհրապարակում գտնվող իր աշխատողների համար անհրաժեշտ սանիտարական և հիգիենիկ պայմաններ համաձայն ՀՀ օրենսդրության:

Կապալառուն իր միջոցներով պետք է կառուցի և սարքավորի ժամանակավոր հակահրդեհային կետեր, ինչպես նաև կազմակերպի հակահրդեհային պաշտպանության ծառայություն:

Կապալառուն տեղական ինքնակառավարման մարմինների համաձայնությամբ իր միջոցներով պետք է իրականացնի ժամանակավոր ցանկապատ, որը պետք է ընդգրկի շինարարական աշխատանքների իրականացման ամբողջ տարածքը: Հասարակական վայրերում գտնվող ցանկապատների տեսքը պետք է համաձայնեցվի տեղական մարմինների հետ: Այն պետք է բացառի այլ անձանց մուտքը շինհրապարակ:

Շինարարության ամբողջ ժամանակամիջոցում, մեկնարկի օրվանից մինչև նախնական ակտի ստորագրումը, Կապալառուն պատասխանատու է իրականացված աշխատանքների, շինարարական նյութերի, սարքերի ու սարքավորումների և այլ արժեքների պահպանության համար: Շինարարության նշված ժամանակամիջոցում տարբեր պատճառներով նրա կրած վնասը ծածկվում է սեփական միջոցների հաշվին, բացառությամբ պայմանագրով նախատեսված դեպքերի:

## 9. Օգտագործվող նյութերը և սարքերը

Շինարարության ընթացքում օգտագործվող բոլոր նյութերը և սարքերը պետք է համապատասխանեն ՀՀ տարածքում գործող նորմերին և ստանդարտներին և ապահովեն աշխատանքների բարձր որակ:

Կապալառուն պետք է նախապես ծանոթանա Տեխնիկական մասնագրերում և ցուցադրական նյութերում ներկայացված պահանջներին:

Կապալառուին Պատվիրատուն է ներկայացնում տվյալ աշխատանքներում օգտագործվող նյութերի և սարքերի ցանկ, որոնց նմուշները մինչև օգտագործումը պարտադիր պետք է ներկայացվեն Պատվիրատուին: Պատվիրատուն, ըստ իր հայեցողության, կարող է պահանջել նաև ցանկում չընդգրկված նյութերի և սարքերի նմուշները և Կապալառուն պարտավոր է դրանք ներկայացնել Պատվիրատուին: Ներկայացվող նյութերի որակը, գույնը և արտաքին տեսքը պետք է համաձայնեցվի Պատվիրատուի և նախագծի հեղինակի հետ:

Նյութերի կամ սարքի վերաբերյալ համաձայնությունը ձևակերպվում է փաստաթղթով, որտեղ նշվում են նրանց բնութագրող բոլոր տվյալները (արտադրողը, չափերը, տեխնիկական հատկանիշները և այլն):

Եթե առաջարկվող նյութերն ու սարքերը չեն համապատասխանում Տեխնիկական մասնագրերով սահմանված պահանջներին, Պատվիրատուն իրավունք ունի մերժել Կապալառուի առաջարկը: Կապալառուն պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին նոր առաջարկներ, մինչև նրանից հավանություն ստանալը:

Կապալառուի կողմից նախահաշվում տվյալ նյութի համար հայտարարած ցածր գինը կամ անտեղյակությունը պահանջներին չի կարող հիմք հանդիսանալ ցածրորակ և Պատվիրատուի կողմից հավանության չարժանացած նյութի օգտագործման համար:

Պատվիրատուին ներկայացված նյութերի ու սարքերի նմուշները պահպանվում են նրա մոտ մինչև համապատասխան աշխատանքների ավարտը և նրանց ընդունումը Պատվիրատուի կողմից: Պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, կարող է պահել նմուշները մինչև աշխատանքների ավարտը և նրա ընդունման վերջնական ակտի ստորագրումը:

Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար պահվող նմուշները Պատվիրատուի և Կապալառուի կողմից հաստատագրվում են երկկողմանի կնքմամբ (ստորագրությամբ, փաթեթավորված թափանցիկ էթիլենային տոպրակում և այլն):

Պատվիրատուն կարող է պահանջել Կապալառուից շինարարության ընթացքում օգտագործվող ցանկացած նյութերի կամ սարքերի փորձարկումներ: Կապալառուն պարտավոր է անվերապահորեն կատարել այդ պահանջները: Պատվիրատուն կարող է նաև, սեփական հայեցողությամբ, ինքնուրույն կատարել նման փորձարկումներ: Այդ դեպքում, Կապալառուն պարտավոր է տրամադրել Պատվիրատուին համապատասխան նմուշները, ինչպես նաև անհրաժեշտ սարքավորումներ, աշխատուժ և այլ պարագաներ ու աջակցել այդ նմուշների փորձարկման իրականացմանը:

Փորձարկման վայրի հեռավորությունը չի ազատում կապալառուին անվերապահորեն կատարելու իր պարտականությունները սեփական միջոցների հաշվին:

Պատվիրատուն իրավունք ունի պահանջել, իսկ Կապալառուն պարտավոր է ստանալ մատակարարից նրա կողմից առաքվող նյութերի և սարքերի փորձարկումների





արձանագրությունները ու դրանց պատճենները: Հանրապետության տարածքում կատարվող փորձարկումները պետք է իրականացվեն հավատարմագրված կազմակերպություններում, արձանագրությունները համապատասխանեն ՀՀ տարածքում գործող նորմերին:

Շինանյութերի և սարքերի փորձարկումներ անցկացնելու համար հանրապետությունում հավատարմագրված են "Հայսեյսմշին" ԳՀԻ ՓԲԸ, "Ճանշին" ԲԲԸ-ի լաբարատորիան, "Ուկրշին" ԲԲԸ (Վանաձոր), Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության "Հյուսիսային բաժանմունք" (Գյումրի), "Արցախ" ՍՊԸ (Գյումրի) և այլն:

## 10. Աշխատանքների ընդունումը

Յուրաքանչյուր փուլում իրականացված աշխատանքները Պատվիրատուի կողմից ընդունվում և վճարվում են ըստ փաստացի կատարված ծավալի, Պայմանագրով սահմանված կարգով, բայց ոչ ավել, քան նախատեսված է նախագծով և նախահաշվով: Նախագծում և նախահաշվում չընդգրկված ծավալների և աշխատանքների կատարումը պետք է նախապես գրավոր համաձայնեցվի Պատվիրատուի հետ՝ Պայմանագրում սահմանված կարգով:

Բոլոր այն աշխատանքները, որոնք կատարվել են Կապալառուի կողմից պայմանագրային նախահաշվից և նախագծից դուրս, առանց Պատվիրատուի հետ նախապես գրավոր համաձայնեցման և Պայմանագրի փոփոխման, Պատվիրատուի կողմից չեն ուսումնասիրվի և չեն վճարվի:

Կապալառուն կարող է ներկայացնել պատվիրատուին իրականացված աշխատանքների համար վճարում կատարելու. եթե՝

- վճարման ներկայացվող կատարված աշխատանքների տեսակները և ծավալները լրիվ համապատասխանում են նախագծային տվյալներին,
- այդ աշխատանքները համապատասխանում են երկկողմանի հաստատված գրաֆիկներով նախատեսված վճարման փուլերին,
- կատարված աշխատանքների որակը համապատասխանում է տեխնիկական մասնագրերի պահանջներին. գործող նորմերին,
- համապատասխան փուլի բոլոր թաքնված աշխատանքները ստուգված են պատվիրատուի կողմից և հաստատված են համապատասխան ակտերով:
- առկա են տվյալ փուլում օգտագործված նյութերի և սարքավորումների համար ՀՀ Օրենքով սահմանված և (կամ) Պատվիրատուի պահանջով կատարված բոլոր փորձարկման ակտերը, լաբորատոր հետազոտությունների եզրակացությունները, սերտիֆիկատները, տեխնիկական անձնագրերը:

Նշված պայմանների բավարարման դեպքում կազմվում է համապատասխան փուլի աշխատանքների ընդունման ակտ Պատվիրատուի կողմից սահմանված ձևով:

Եթե Պատվիրատուն հիմնավորված պատճառաբանմամբ մերժում է աշխատանքների ընդունումը, ապա Պատվիրատուի կողմից առաջադրված պահանջները հայտնաբերված թերությունների վերաբերյալ Կապալառուն պարտավոր է անվերապահորեն կատարել, ինչպես նաև հեռացնել շինհրապարակից անորակ և վնասված նյութերն ու

կոնստրուկցիաները: Թերությունների վերացման հետ կապված լրացուցիչ ծախսերը կատարվում են Կապալառուի հաշվին:

Անորակ կատարված աշխատանքների ծավալները չեն կարող հանվել նախահաշվից չվճարելու պայմանով, կամ փոխարինել այլ աշխատանքների ծավալներով ու նրանց գներով:

Շինարարության ընթացքում շրջակա միջավայրին հասցված վնասները հատուցվում են Կապալառուի կողմից, իսկ չկատարելու դեպքում Կապալառուն պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ծածկման ենթակա աշխատանքները նախորք պետք է ներկայացվեն Պատվիրատուին, կամ նրա ներկայացուցչին, դրանց կատարման որակի համար հավանություն ստանալու նպատակով: Պատվիրատուի հավանության դեպքում այդ աշխատանքների որակի ընդունումը ձևակերպվում է Կապալառուի կողմից կազմված թաքնված աշխատանքների ակտով, երկկողմանի ստորագրությամբ, համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության 28.04.98թ. դ 4 հրամանի: Ակտը կազմվում է 3 օրինակից, որոնցից 2 օրինակը պատկանում է Պատվիրատուին, իսկ 1 օրինակը՝ Կապալառուին: Կապալառուի կողմից կատարված աշխատանքների փուլերը վճարվում են միայն այդ փուլերում կատարված բոլոր թաքնված աշխատանքների համար սահմանված կարգով կազմված ակտերի առկայության դեպքում:

Ծրագրի կատարման ավարտից հետո, Պատվիրատուի կողմից աշխատանքների ընդունումը իրականացվում է պայմանագրով նախատեսված կարգով:

## 11. Աշխատանքների երաշխիքը

Կապալառուն պարտավոր է իր հաշվին վերացնել այն թերությունները, որոնք ի հայտ կգան պայմանագրում նշված երաշխիքային ժամկետներում կառույցների շահագործման ընթացքում (աշխատանքների ցանկը և երաշխիքային ժամկետները որոշում է Պատվիրատուն, որոնք զետեղվում են Պայմանագրում):

Երաշխիքային ժամանակամիջոցում հայտնաբերված թերությունների մասին Պատվիրատուի և Կապալառուի կողմից կազմվում է համապատասխան երկկողմանի ակտ, որում նշվում են թերությունները, նրանց չափերն ու ծավալները, վերացման ժամկետները:

**Աշխատանքների կատարման համար պահանջվող տեխնիկական միջոցներ**

| Հ/Հ | Անվանումը | Պահանջվող հզորության մեքենամեխանիզմներ | Պահաջվող քանակը |
|---|---|---|---|
| 1 | Մարդատար ավտոմեքենա | - | 1 |
| 2 | Վերամբարձ ավտոմեքենա | - | 1 |
| 3 | Ավտոինքնաթափ | 10տն | 1 |
| 4 | Էքսկավատոր | մինչև 0.8մ³ | 1 |
| 5 | Զոդման սարք | - | 2 |
| 6 | Օդամղիչ սարք | - | 1 |





**Աշխատանքների կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսներ**

| Հ/Հ | Մասնագետներ | Քանակ | Կարգ | Փաստաթղթերի առկայություն | Այլ փաստաթղթեր |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ճարտարագետ | 1 | բարձ. կրթություն | Դիպլոմ | |
| 2 | Աշխղեկ | 1 | բարձ. կրթություն | Դիպլոմ | |
| 3 | Գազակտրող | 1 | - | | |
| 4 | Բանվոր | 3 | - | - | |
| 5 | Մոնտաժող | 2 | - | - | |
| 6 | Վարորդ | 2 | - | - | |
| 7 | Էլ. եռակցող | 2 | - | վկայական | |
| 8 | Խողով.մեկուսացնող | 1 | - | - | |

Կապալառու կազմակերպությանից շինարարական աշխատանքների իրականացման համար պահանջվող լիցենզիաները:

ըստ « Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» հետևյալ ոլորտների՝

| *Հ/Հ* | *Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).* |
|---|---|
| *1* | *2* |
| *1* | Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) |

Շինարարության տեղնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությանից պահանջվող լիցենզիաները՝

*ըստ « Քաղաքաշինության* Շինարարության տեղնիկական հսկողության *իրականացում» հետևյալ ոլորտների՝*

| *Հ/Հ* | *Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).* |
|---|---|
| *1* | *2* |
| *1* | Ջերմագազամատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) |

Կազմեց՝ Պ. Հովսեփյան

Օրացուցային գրաֆիկ  շինարարության արտադրության կազմակերպման

Բյուրեղավան համայնքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան գազաֆիկացում

| № ը/կ | Աշխատանքների անվանումը | Օր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Նախապարաստական աշխատանքներ | | | | | | | |
| 2 | Խրամուղու փորում | | | | | | | |
| 3 | Քանդված գրունտի տեղափոխում 3կմ | | | | | | | |
| 4 | Պոլիէթիլենե գազատար խողովակների տեղադրում | | | | | | | |
| 5 | Պոլիէթիլենե գազատար խողովակների փչամաքրում և փորձարկում | | | | | | | |
| 6 | Խրամուղու ետլիցք ավազով տոփանումով | | | | | | | |
| 7 | ՊԳԿԿ, հաշվիչ հանգույցի և սարքավորումների տեղադրում | | | | | | | |
| 8 | Պողպատե խողովակների տեղադրում | | | | | | | |
| 9 | Պողպատե խողովակների փչամաքրում և փորձարկում | | | | | | | |
| 10 | Խողովակների յուղաներկում 2 անգամ | | | | | | | |
| 11 | Աշխատանքների փաստագրում և հանձնում | | | | | | | |

«Խոյանքե ՍՊԸ Տնօրեն Է. Հովսեփյան

Քարտեզի դիտում







Можно не печатать, установите Яндекс Карты на телефон

## Ընդհանուր տվյալներ

Բյուրեղավան համանքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն նախագիծը մշակվել է «Խոյանք» ՍՊԸ-ի կողմից պատվիրատու Բյուրեղավանի համայնքապետարանի պատվերի համաձայն:

Գազատարի կառուցում նախագիծը կատարված է նախագծային առաջադրանքի հիման վրա, համաձայն տեխնիկական պայմանի և ըստ գործող շինարարական նորմերի և կանոնների:

Նախագծվող գազատարը նախատեսվում է միացնել Կոտայքի փողոցով անցնող Φ63մմ մ/ճ ստորգետնյա պ/էթ գազատարին: Ներմիացման կետում ՆԿ 0+00 նախատեսվում է գոտի միացում Φ63/63: Կառուցվող գազատարը նախատեսվում է PE100 SDR 11 ԳՈՍՏ P50838-95 Φ63x5.8 ստորգետնյա եղանակով L=70մ: ՆԿ 0+10 նախատեսվում է հաշվիչ հանգույց Գազահաշվիչ GSA40 տիպի, ճնշման կարգավորիչ, էլ ճշտիչ կահավորված պահարանով (ՊԳԿԿ):
Ելնելով տրված աշխատանքային շահագործման պայմաններից և ճնշումից, խողովակների նյութը ընտրում ենք համաձայն ԳՈՍՏ P50838-95, ԳՕՍՏ 10704-91 և ԳՕՍՏ 3262-85: Պողպատյա գազատարների և ձևավոր մասերի միացումները նախատեսված են էլեկտրաաղեղնավոր կամ գազային եռակցմամբ: Գազատարները տեղադրումից հետո ենթակա են փչամաքրման և փորձարկման:

Գազատարների փորձարկումը Շինարարության ավարտից հետո պետք է կատարվեն գազատարների կիպության փորձարկում օդով: Կիպության փորձրկումը կատարվում է գազատարի մեջ սեղմված օդի մատուցմամբ, որի ճմշումը հասցվում է փորձարկման ճնշմանը: Վերգետնյա պողպատյա գազատարների փորձարկման նորմաները ընդունել համաձայն ՀՀՇՆ 42-01-2023 աղյուսակ-1-ին համապատասխան: Փորձարկման ընթացքում հայտնաբերված արատները պետք է վերացվեն գազատարում ճնշումը մինչև մթնոլորտայինի իջեցնելուց հետո: Արատները վերացնելուց հետո գազատարի կիպության փորձարկումը պետք է կրկնվի: Բոլոր եռակցակարերը, որոնք կատարվել են փորձարկումներից հետո, պետք է ստուգվեն ֆիզիկական մեթոդով:

Նախագծում գազատարի տեղադրումը նախատեսված է ստորգետնյա և վերգետնյա եղանակով: Վերգետնյա գազատարները շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանելու համար նախատեսված է կրկնակի յուղաներկում:

Պոլիէթիլենե գազատարի տեղադրումը կատարվում է բաց խրամուղում: Գազատարը տեղադրվում է խողովակի վերևից 1,0մ-ից ոչ պակաս խորությամբ: Գազատարը տեղադրվում է գրունտի սառեցման գոտուց ցածր, խողովակի վերևից 1.0 մ-ից ոչ պակաս: Գազատարի տեղադրումը պետք է կատարել -15°C +30°C ջերմաստիճանի պայմաններում, ընդ որում ձմռանը՝ օրվա ամենատաք ժամերին, իսկ ամռանը՝ ամենացուրտ ժամերին: Երկարաչափ խողովակների տեղադրումը պետք է կատարել շրջապատի օդի +5°C-ից +30°C ջերմաստիճանի պայմաններում: Խրամուղիներում և փոսերում թույլատրվում է կատարել պոլիէթիլենային խողովակների շրջադարձ բնական ճկվածքով 25 արտաքին տրամագծի չափից ոչ պակաս շառավիղի թեքությամբ: Տեղադրվող գազատարի տակ նախատեսված է ավազե նստաշերտ 10 սմ հաստությամբ և ծածկում ավազե շերտով: ՊԷ գազատարի ուղեգծի տեղը որոշելու համար նախատեսվում է գազատարի երկայնքով 20 սմ բարձրության վրա գազ-ըի վերին եզրից տեղադրել պոլիմերային ազդանշանային ժապավեն դեղին գույնի 20սմ-ից ոչ պակաս լայնությամբ և պղնձե 2,5մ2 հախորդալար իսկ այլ ստորգետնյա կոմունիկացիաների հետ հատման տեղերում ժապավենը փռել երկու շերտով, իրարից 20 սմ-ից ոչ պակաս հեռավորության վրա և երկուական մետր հատվող կառույցի երկու կողմից: Ծածկումից և ազդանշանային ժապավենի տեղադրումից հետո թույլատրվում է կատարել ետլիցք ավազով: Ստորգետնյա հաղորդակցուղիների հետ հատման տեղամասերում նախատեսվում է ազդանշանային ժապավենի լրացուցիչ տեղադրում 25 սմ խորությամբ հաշված հողի մակերեսից: Պոլիէթիլենային խողովակների միացումը միմյանց նախատեսվում է կցվանքային եռակցմամբ՝ միջին աստիճանի ավտոմատացված մեքենաներով և 100% ստուգմամբ ֆիզիկական մեթոդով (УЗК): Եռակցման աշխատանքները թույլատրվում է կատարել շրջապատի օդի -15°C մինչև +45°C ջերմաստիճանի պայմաններում: -15°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում եռակցումը կատարվում է հատուկ ծածկի տակ՝ ջերմաստիճանը հասցնելով տեխնոլոգիականին: Պոլիէթիլենային խողովակների միացումը միմյանց նախատեսվում է նաև կցորդչային եռակցմամբ՝ միջին աստիճանի ավտոմատացված մեքենաներով և ուլտրաձայնային մեթոդով (УЗК)100% ստուգմամբ: Ստորգետնյա ՊԷ գազատարի հատվածը լրացուցիչ նշվում է ազդանշանային պղնձյա մեկուսացված լարի տեղադրմամբ, գազի հոսքի ուղղությամբ 20սմ դեպի աջ՝ շահագործման ընթացքում գազատարի ուղեգիծը գտնելու համար: Լարի ծայրերը դուրս են բերվում հողից գազատարի «մուտք» և «ելք» կետերում պատյանի մեջ: Նախագծվող վերգետնյա գազատարների մոնտաժումն իրականացվում է պողպատյա էլեկտրաեռակցված խողովակներից համաձայն ԳՕՍՏ 10704-91: Պոլիէթիլենից-պողպատ անցման տեղերում նախատեսված են գործարանային արտադրության ''ՊԷ/Պող.'' չկազմատվող միացումներ: ''Ելք հողից'' և ''Մուտք հող'' կետերում նույնպես նախատեսված են պողպատյա պատյաններ: Պողպատյա գազատարների և ձևավոր մասերի միացումները նախատեսված են էլեկտրաաղեղնավոր կամ գազային եռակցմամբ: Կոռոզիայից պաշտպանելու համար պողպատե վերգետնյա գազատարը յուղաներկվում է 2 անգամ: Գազատարները տեղադրումից հետո ենթակա են փչամաքրման և փորձարկման

Նախագիծը մշակված է համաձայն գործող ՀՀՇՆ 42-01-2023 «Գազաբաշխիչ համակարգեր» «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջների:

Նախագծից բոլոր շեղումները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի, շահագործող կազմակերպության և նախագծի հեղինակի հետ:

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները Նախագծով ընդունված բոլոր տեխնիկական լուծումները բացառում են շրջակա միջավայրի աղտոտումը գազատարների նորմալ շահագործման պայմաններում: Շրջակա միջավայրի ախտոտումը հնարավոր է միայն վթարների ժամանակ: Վթարները բացառելու համար գազատարը ենթարկվում է փորձարկման համաձայն ՀՀՇՆ 42-01-2023 <<Գազաբաշխիչ համակարգեր>>: Խողովակների միացման մասերում քայքայումը կանխելու համար նախատեսվում է եռակցակարերի ստուգում ֆիզիկական մեթոդներով: Բնության պահպանության նպատակով անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները - շինարարության համար հատկացված տարածքի սահմանների պարտադիր պահպանություն - շին. հրապարակի աշխատանքային տեղերի կենցաղային և շինարարական թափոնների համար բեռնարկղերով հագեցվածություն - դյուրավառ և քսայուղերի դատարկումը միայն հատուկ առանձնացված տեղերում - ամբողջ ծավալով հողերի վերականգնման միջոցառումների իրականցում - բնապահպանական տեղական մարմինների պահանջների ապահովում:

### Աշխատանքայինն թերթերի լրակազմ

| Հ/h | Անվանումը | Ծանոթություն |
|---|---|---|
| 1 | Ընդհանուր տվյալներ | |
| 2 | Գլխավոր հատակագիծ Մ 1:500 | |
| 3 | Երկայնական կտրվածք | |
| 4 | Կաթսայատան հատակագիծ, տարածական սխեմա | |

### Աշխատանքային ծավալներ

| Հ/h | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Ծանոթ. |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | **1. Հողային աշխատանքներ** | | | |
| 1 | Խրամուղու մշակում էքսկավատորով II կարգի գրունտներում, բարձելով ա/մեքենա | մ$^3$ | 17,81 | |
| 2 | Խրամուղու մշակում էքսկավատորով III կարգի գրունտներում, բարձելով ա/մեքենա | մ$^3$ | 35,62 | |
| 3 | Խրամուղու մշակում ձեռքով IVp կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^3$ | 1,78 | |
| 4 | Խրամուղու մշակում էքսկավատորով IV կարգի գրունտներում, բարձելով ա/մեքենա | մ$^3$ | 33,84 | |
| 5 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ$^3$ | 8,91 | |
| 6 | Ետլիցք ավազով ձեռքով տոփանումով | մ$^3$ | 4,45 | |
| 7 | Ետլիցք ավազով մեխ. Տոփանումով | մ$^3$ | 84,60 | |
| 8 | Քանդված գրունտի տեղափոխում 3կմ | տ | 160,29 | |
| | **2. Տեխնոլոգիական աշխատանքներ** | | | |
| 1 | Pe 100 SDR 11 Φ63x5,8 Պոլիէթիլենե խողովակների տեղադրում խրամուղում | գծմ | 68,50 | ԳՕՍՏ P50838-95 |
| 2 | ՆՍ անցում Φ57x3,5(St)/Φ63x5,8(Pe) | հատ | 3,0 | |
| 3 | Պ/էթ եռաբաշխիչ Φ63x63x63 SDR 11 PE100 | հատ | 1,0 | |
| 4 | Պ/էթ անկյունակ Φ63 SDR 11 PE100 | հատ | 1,0 | |
| 5 | Պողպատյա գազատար խողովակի մոնտաժում<br>Ø108x4,0մմ<br>Ø57x3,5մմ<br>Ø25x2,0մմ | մ | 3<br>10,5<br>3 | ԳՕՍՏ 10704-91 |
| 6 | Պողպատե պատյան<br>Φ133x4մմ<br>Φ108x3,5մմ | գծմ | 11<br>7 | |
| 7 | Գազատար խողովակի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում<br>Φ57x3,5մմ | մ | 6,50 | |
| 8 | Պատյան խողովակի ուժեղացված հակակոռոզիոն մեկուսացում<br>Φ133x4,0մմ<br>Φ108x3,5մմ | մ | 11,00<br>6,50 | |
| 9 | Պատյանի ծայրերի հերմետիկացում բիտումով | տեղ | 10 | |
| 10 | Բացահայտիչ ժապավեն | մ | 68,50 | |
| 11 | Պղնձե լար 2x2,5մմ2 | մ | 73,50 | |
| 12 | Խցափակիչ<br>Ø108x6,3մմ | հատ/կգ | 2 / 2,4 | |
| 13 | Փական Φ50մմ | հատ | 3 | |
| 14 | Փական Φ20մմ | հատ | 2 | |
| 15 | Անկյունակ<br>Φ57x4մմ | հատ/կգ | 7 / 4,7 | |
| 16 | Գազատար խողովակների ներկում 2 անգամ<br>գրունտ ГФ-021<br>յուղաներկ | մ$^2$ | 3,90 | ԳՕՍՏ 28129-82 8292-85 |
| 17 | Պահարանային գազակարգավորիչ կայան գազահաշվիչ հանգույցով<br>Հաշվիչ հանգույց, GSA-40, 6 bar, 0.4-65մ³/ժ, էլեկտրոնային ճշտիչ | կ-տ | 1,00 | |
| 18 | Խճի շերտ 10սմ | մ3 | 0,10 | |
| 19 | Բետոնից հիմքեր B 12,5 | մ3 | 0,30 | |
| 20 | Ապահովիչ կափույր Φ50 | հատ | 1,00 | |
| 21 | Ազդանշանային սարք | հատ | 1,00 | |
| 22 | Պողպատե գազատարի փչամաքրում | մ | 85,00 | |
| 23 | Պողպատե գազատարի փորձարկում | մ | 85,00 | |

| | | | |
|---|---|---|---|
| Տնօրեն | Է. Հովսեփյան | Պատվիրատու՝ Բյուրեղավանի համայնքապետարան<br>Պայմանագիր՝ N ԿՄԲՀ-ՄԱԾՁԲ -25/38 | |
| ՆԳՃ | Վ. Հովսեփյան | Բյուրեղավան համանքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն | Փուլ: ԱՆ; Թերթ: Գ-1; Թերթեր: 4 |
| նախագծեց | Պ. Հովսեփյան | Ընդհանուր տվյալներ | «Խոյանք» ՍՊԸ<br>լից N-001379-06 |

# Գլխավոր հատակագիծ Մ 1:500




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

| | |
|---|---|
| "Ա" | Ասֆալտապատ ճանապարհ |
| "Հ" | Հողային ճանապարհ կամ պատառ |
| - - Գ - - Գ - - | Գործող գազատար |
| —Գ1—Գ1— | Կառուցվող վերգետնյա գազատար |
| - - Գ1 - - Գ1 - - | Կառուցվող ստորգետնյա գազատար |
| — —Ջ— —Ջ— — | Գործող ջրագիծ |
| — —Կ— —Կ— — | Գործող կոյուղագիծ |
| — — —ԿԱՊ— — — | Կապի մալուխագիծ |
| - - N - - - N - - | Էլ. մալուխագիծ |

*Հողային աշխատանքերի ժամանակ կոմունիկացիաների ի հայտ գալու դեպքում, անհապաղ կանգնեցնել աշխատանքները և տեղյակ պահել շահագործող կազմակերպության աշխատակիցներին:

| | | | |
|---|---|---|---|
| Տնօրեն | Է. Հովսեփյան | | Պատվիրատու՝ Բյուրեղավանի համայնքապետարան<br>Պայմանագիր՝ N ԿՄԲՀ-ՄԱԾՁԲ -25/38 |
| ՆԳՃ | Վ. Հովսեփյան | | Բյուրեղավան համայնքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն |
| նախագծեց | Պ. Հովսեփյան | | Գլխավոր հատակագիծ Մ 1:500 |

| Փուլ | Թերթ | Թերթեր |
|---|---|---|
| ԱՆ | Գ-2 | 4 |

«Խոյանք» ՍՊԸ
լից N-001379-06

# Երկայնական կտրվածք




| | ՆԿ 0+00 | ՆԿ 0+9,5 | ՆԿ 0+10 | ՆԿ 0+11 | ՆԿ 0+13 | ՆԿ 0+40 | ՆԿ 0+63 | ՆԿ 0+70 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հողի նախագծային նիշը, մ | 1373.98 1373.98 | 1373.63 | | 1373.63 | 1373.63 | 1373.30 | 1372.98 1372.98 | 1372.98 |
| Փաստացի հողի նիշը, մ | 1373.98 | 1373.63 | | 1373.63 | 1373.63 | 1373.30 | 1372.98 | 1372.98 |
| Խրամուղու հատակի նիշը, մ | 1373.98 | 1373.63 | | 1373.63 | 1373.63 | 1373.30 | 1372.98 | 1372.98 |
| Գազատարի ներքևի նիշը, մ | 1372.917 | 1372.567 | | 1372.567 | 1372.567 | 1372.237 | 1371.917 | 1371.917 |
| Գազատարի վերևի նիշը, մ | | 1374.63 | | 1374.13 | | | | 1375.98 |
| Խրամուղու խորությունը, մ | 1.163 | 1.163 | | 1.163 | 1.163 | 1.163 | 1.163 | 1.163 |
| Գազատարի տեսակը, մեկուսացման տիպը | PE100 SDR 11 Φ63x5.8 ավազի նախ. շերտ 10սմ | | | | | | | |
| Թեքություն/հեռավորություն | 0,036 / 9.5 | 0,000 / 3.5 | | | 0,012 / 27 | 0,013 / 23 | 0,000 / 7 | |
| Հեռավորություն, մ | 9.5 | 0.5 | 1 | 2 | 27 | 23 | 7 | |
| Ցցանշում | ՆԿ 0+00 | ՆԿ 0+9,5 | ՆԿ 0+10 | ՆԿ 0+11 | ՆԿ 0+13 | ՆԿ 0+40 | ՆԿ 0+63 | ՆԿ 0+70 |
| Գազատարի հատակագիծ | | | | | | | | |




Հաշվիչ հանգույց




Կտրվածք 3-3




ՆԿ 0+70
Ելք հողից




Կտրվածք 1-1




Կտրվածք 2-2




| | | | Պատվիրատու՝ Բյուրեղավանի համայնքապետարան Պայմանագիր՝ N ԿՄԲՀ-ՄԱԾՁԲ -25/38 | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Տնօրեն | Է. Հովսեփյան | | | | | |
| ՆԳՃ | Վ. Հովսեփյան | | Բյուրեղավան համայնքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադաշտի կաթսայատան գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն | Փուլ | Թերթ | Թերթեր |
| | | | | ԱՆ | Գ-3 | 4 |
| նախագծեց | Պ. Հովսեփյան | | | «Խոյանք» ՍՊԸ lից N-001379-06 | | |
| | | | Երկայնական կտրվածք | | | |

# Կաթսայատան հատակագիծ, տարածական սխեմա







| | | |
|---|---|---|
| ՋԿ | | — Ջեռուցման կաթսա Q=150կվտ |
| ■ | ԱՍ | — Ազդանշանային սարք |
| ▶◁ | ՎԱԿ | — Վթարային անջատիչ կափույր Փ50մմ |
| — · — · — | | — պղձե լար 2x2.5մմ$^2$ ԱՍ-ի համար L=5մ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Տնօրեն | Է. Հովսեփյան | | | Պատվիրատու՝ Բյուրեղավանի համայնքապետարան<br>Պայմանագիր՝ N ԿՄԲՀ-ՄԱԾՁԲ -25/38 | | | |
| ՆԳՃ | Վ. Հովսեփյան | | | Բյուրեղավան համանքի Կոտայք փողոց 28/89 հասցեում գտնվող մարզադպրոցի կաթսայատան գազաֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություն | Փուլ<br>ԱՆ | Թերթ<br>Գ-4 | Թերթեր<br>4 |
| նախագծեց | Պ. Հովսեփյան | | | Կաթսայատան հատակագիծ, տարածական սխեմա | «Խոյանք» ՍՊԸ<br>լից N-001379-06 | | |